ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ

ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հունվարի 19-ից մինչև 2022 թվականի ապրիլի 19-ը աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Սվետլանա Ջիլավյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ.

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված իրավական սկզբների, ռազմավարական ծրագրերի և միջոցառումների մշակում և համապատասխան ընթացակարգով շրջանառում.

   - Հաշմանդամություն ունեցող անձանց ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակում ընդունված վարչապետի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող N 1317-Ա որոշման 2-րդ միջոցառման շրջանակներում մասնակցել եմ **«Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների փոխակերպման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»** կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներին: Իրականացրել եմ վերջինիս համապատասխան ընթացակարգով շրջանառումը, ստացված կարծիքների հիման վրա նախագծի լրամշակումը և համապատասխան փաթեթով ներկայացրել եմ վարչապետի աշխատակազմ:
   - Հաշմանդամություն ունեցող անձանց ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակում ընդունված վարչապետի «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1316-Ա որոշման հավելվածի 7-րդ կետի շրջանակներում մասնակցել եմ **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»** կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներին մասնակցություն: Իրականացրել եմ վերջինիս համապատասխան ընթացակարգով շրջանառումը, ստացված կարծիքների հիման վրա նախագծի լրամշակումը և համապատասխան փաթեթով

ներկայացրել եմ վարչապետի աշխատակազմ: *Նախագիծը կառավարության նիստում ընդունվել է:*

- «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1316-Ա որոշման հավելվածի 5-րդ կետի շրջանակներում մասնակցել եմ **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 11-ի N 619-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներին: Իրականացրել եմ վերջինիս համապատասխան ընթացակարգով շրջանառումը, ստացված կարծիքների հիման վրա նախագծի լրամշակումը և համապատասխան փաթեթով ներկայացրել եմ վարչապետի աշխատակազմ: *Նախագիծը կառավարության նիստում ընդունվել է:*
- Մասնակցել եմ **«Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը եվ պայմանները հաստատելու մասին»** կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներին: Իրականացրել եմ վերջինիս համապատասխան ընթացակարգով շրջանառումը, ստացված կարծիքների հիման վրա նախագծի լրամշակումը և համապատասխան փաթեթով ներկայացրել եմ վարչապետի աշխատակազմ:
- Մասնակցել եմ **«Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող մատչելիության պահանջները հաստատելու մասին»** կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներին: Իրականացրել եմ վերջինիս համապատասխան ընթացակարգով շրջանառումը, ստացված կարծիքների հիման վրա նախագծի լրամշակումը և համապատասխան փաթեթով ներկայացրել եմ վարչապետի աշխատակազմ:
- Մասնակցել եմ **«Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը սահմանելու մասին»** կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներին: Իրականացրել եմ վերջինիս համապատասխան ընթացակարգով շրջանառումը, ստացված կարծիքների հիման վրա նախագծի լրամշակումը և համապատասխան փաթեթով ներկայացրել եմ վարչապետի աշխատակազմ:

Ապաինստիտուցիոնալացման և հաշմանդամություն ունեցող անձանց համայնքահենք ծառայություններ մատուցելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու նպատակով մասնակցել եմ համայնքահենք փոքր խմբային տների ներդրման ծրագրի կազման, հաշվարկների իրականացման և

ծրագրի վերաբերյալ տեսահաշվետվության պատրաստման աշխատանքներին:

2. Իրականացրել եմ հաշմանդամություն ձեռք բերած անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման միջոցառումների ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին 369-Լ որոշման/Ծրագրում ներառված միջոցառումների իրականացման վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ստացված տեղեկատվության հավաքագրում, նախարության կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ամբողջացում: Մշակված հաշվետվությունը համապատասխան ընթացակարգով ներկայացրել եմ վարչապետի աշխատակազմ և նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրմանը:
3. Մասնակցել եմ «Հաշմանդամության գնահատման կապակցումը հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ծառայությունների մատուցման հետ» թեմայով քննարկմանը, ինչպես նաև կազմակերպել և մասնակցել եմ ՖՄԴ գնահատման նոր մոդելի վերաբերյալ տարրաբնույթ քննարկումների:
4. Իրականացրել եմ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության նկատմամբ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած անձանց ֆունկցիոնալ պրոթեզավորման նպատակով 8 կողմանի կնքված հուշագրի շրջանակներում պրոթեզավորված անձանց տվյալների հավաքագրում, մշակում և վերլուծություն: Անհրաժեշտության դեպքում զինծառայողների հետ հեռախոսազանգի միջոցով ճշգրտում եմ պրոթեզավորման ընթացքի, պրոթեզի որակի և այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն:
5. Կազմակերպել և մասնակցել եմ տեղական և միջազգային գործընկերների հետ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտում, այդ թվում պատերազմի հետևանքով վիրավորում ստացած անձանց ֆունկցիոնալ պրոթեզավորմանն առնչվող քննարկումներին: Հանդես եմ եկել մի շարք առաջարկներով:
6. Իրականացրել եմ ներքին և այլ գերատեսչություններից ներկայացված իրավական ակտերի ուսումնասիրություն և համապատասխան կարծիքների ներկայացում:
7. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացված հարցերի շրջանակում ներկայացրել եմ համապատասխան դիտարկումներ: Սահմանված

ընթացակարգով պատասխանել եմ բոլոր գրություններին և բարձրացված հարցերին:

8. Կազմակերպել եմ վարչապետի 2008 թվականի փետրվարի 25-ի N 98-Ն որոշմամբ հաստատված՝ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նիստ: Կազմել եմ նիստի օրակարգը և համապատասպխան գրություններով ուղարկել նիստի անդամներին: Մասնակցել եմ նիստին, արդյունքում կազմել արձանագրություն և ներկայացրել նիստին ներկա անդամներին:
9. Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N1112 որոշման իրականացրել եմ դրամաշնորհի մրցույթում հաղթած կազմակերպություններ դիմող շահառուների ուղեգրման համար ՄՄԾ-ից ուղարկված գրությունների և փաստաթղթերի ուսումնասիրություն և պատասխան գրությունների կազմում: Իրականացրել եմ ուղեգրվող անձանց տվյալներըի համապատասխան գրանցամատյան մուտքագրումը: (ընթացիկ)
10. Իրականացրել եմ դրամաշնորհի մրցույթում հաղթած ՀԿ-ների («Աստղավարդ», «Աուտիզմ ազգային հիմնադրամ», «Լիարժեք կյանք», «Մանկական զարգացման հիմնադրամ») կողմից հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ հաշվետվությունների ընդունում, հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմում:
11. Իրականացրել եմ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից որակավորված և համապատասխան պայմանագիր կնքած կազմակերպությունների՝ «Նոր Որակ» ՍՊԸ, «Դանինի» ՍՊԸ, «Օրթեզ» ՍՊԸ, «Աչք» ՍՊԸ, «Ձայնալարերը հեռացվածների միավորում» ՀԿ, «Հայաստանում համահայկական միջազգային բժշկական հիմնադրամ» ՀՄԴ, «Նանո-Պռո» ՍՊԸ, «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» ԲՀԿ աջակցող միջոցներ տրամադրելու վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների ընդունում, կատարողականների ուսումնասիրություն, վերլուծություն, եզրակացությունների կազմում, դրանց կատարելագործմանն ուղղությամբ առաջարկությունների կազմում:
12. Իրականացարել եմ կառավարությունից, ազգային ժողովից, այլ

գերատեսչություններից և կազմակերպություններից ստացված գրությունների ուսումնասիրում և պատասխան գրությունների պատրաստում: Ներքին գրավոր հանձնարարականների կատարման վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրում, գրավոր տեղեկատվությունների տրամադրում:

13. Պատասխանել եմ քաղաքացիների դիմում-բողոքներին: Ներկայացված դիմումները և բողոքները ենթարկվել են մանրամասն ուսումնասիրության և տրամադրվել է համապատասխան պարզաբանումներ խնամակալության, հաշմանդամություն ունեցող անձանց արտոնությունների, հավաստագրերի տրամադրման կարգի և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: (ընթացիկ)

15. Մասնակցում եմ բաժնի ընթացիկ աշխատանքներին, քննարկումների և հանդիպումներին: Միաժամանակ, բաժնի աշխատանքներից ելնելով կազմակերպում եմ հանդիպումներ տարբեր կազմակերպությունների, ՀԿ-ների և ստորաբաժանումների հետ:

Փորձագետ՝ Սվետլանա Ջիլավյան

02.06.2022 թ.

փաստաթղթերի կողմից կատարվող աշխատանքներից գոհունակություն եմ զգում: Հի շնորհակալ է գեր ցանկացած հեռանկարի համար: